

Օպտիմալ արժութային գոտիների տեսությունների հայեցակարգային մոտեցումները

Ավագյան Միսակ

Հանգուցային բառեր. օպտիմալ արժութային գոտի, օպտիմալության չափանիշ, տնտեսական կոնվերգենցիա, տնտեսական և արժութային միություն, արժութային փոխարժեք, տարածաշրջանային արժութային համակարգ, արտաքին և ներքին հավասարակշռություն

Նախաբան

Արժութային գոտիների տեսաբանների առաջ քաշած հիմնադրույթներն իրենց գործնական կիրառությունը ստացել են Եվրոպական միության և եվրոպական արժութային համակարգի ձևավորման գործում, ինչը հանգեցրել է տարածաշրջանային միասնական արժույթի՝ եվրոյի ներդրմանը: Օպտիմալ արժութային գոտիների տեսության վերաբերյալ հետազայում ներկայացվել են նոր հետազոտություններ, որոնց կարևորությունը պայմանավորված էր համաշխարհային տնտեսական կապերի գլոբալացման աճով: Վերջինս հանգեցնում է համաշխարհային տնտեսությունում կապիտալի շարժի ծավալների աճին, որի արդյունքում ֆիքսված արժութային փոխարժեքի ռեժիմը համարվում է ոչ այդքան հուսալի գործիք, մինչդեռ լոդացող փոխարժեքին անցումն էլ, իր հերթին, ցույց է տալիս, որ այդ համակարգը նույնպես ի վիճակի չէ ապահովելու կենսունակ պայմաններ երկրների արտաքին տնտեսական գործունեության համար՝ արժութային փոխարժեքի խիստ անկայունության պատճառով: Օպտիմալ արժութային գոտիների տեսության շրջանակներում մի շարք հետազոտողների կողմից տարբեր ժամանակաշրջաններում ներկայացվել են օպտիմալության ապահովման տարբեր չափանիշներ (գների և աշխատավարձի ճկունություն, արտադրության գործոնների շարժունակություն, ֆինանսական շուկաների ինտեգրում, տնտեսական բացություն, արտադրության և սպառման բազմազանացում, հարկաբյուջետային ինտեգրում, գնաճի տեմպերի նմանություն, քաղաքական ինտեգրում), որոնք միմյանց թե՛ լրացնում և թե՛ հակասում են: Չնայած դրան՝ տնտեսագետները միակարծիք են այն հարցում, որ գոյություն ունեն պայմաններ, որոնց առկայության դեպքում որոշ երկրների համար արտաքին և ներքին հավասարակշռություն ապահովելու տեսանկյունից ավելի նախընտրելի է համարվում ֆիքսված փոխարժեքի կիրառումը, որը հիմնավորող հիմնական փաստարկը հանդիսանում է վերջիններիս

տնտեսության վրա տարբեր շոկերի ազդեցության դեպքում լողացող և ֆիքսված փոխարժեքների առավելությունների, թերությունների համեմատական վերլուծությունը:

Նշված խնդիրներն ուսումնասիրելու նպատակով աշխատանքում ներկայացվել են արժութային ինտեգրման՝ որպես զրոբալացման պայմաններում համաշխարհային արժութային համակարգի զարգացման հիմնական միտումներից մեկի տեսական հիմնադրույթների և չափանիշների վերաբերյալ տարբեր հայեցակարգային մոտեցումների դիտարկումները, և դրանց հիման վրա վեր են հանվել արժութային ինտեգրման տեսական հիմնավորումների որոշ հիմնախնդիրներ: Մատնանշվել են նաև օպտիմալ արժութային գոտու ձևավորման և դրա չափանիշների սահմանման առաջնահերթությունները:

Օպտիմալ արժութային գոտիների չափանիշների տեսական վերլուծությունը

Ըստ օպտիմալ արժութային տեսության հիմնադիր Ռ. Մանդելի՝ օպտիմալ արժութային գոտու ստեղծումը հնարավոր է երկու հիմնական չափանիշների բավարարման դեպքում, որոնցից առաջինը երկրների միջև արտաքին շոկերի, այսինքն՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդների նմանությունն է, իսկ երկրորդը՝ տարբեր շոկերի դեպքում արտադրության գործոնների շարժունակության բարձր աստիճանը [11, 661]:

Ըստ նրա՝ օպտիմալ արժութային գոտու ձևավորման նախաձեռնողները պետք է հանդիսանային հենց եվրոպական երկրները, քանի որ փոխադարձ առևտրի շրջանակներում փոքր երկրները, որոնք կազմում էին եվրոպական ինտեգրման մասնակիցների մեծ մասը, ստիպված էին կուտակել մեծ ծավալի արժութային ռեզերվներ՝ իրենց արժույթների ֆիքսված փոխարժեքը պահպանելու համար: Հենց ֆիքսված փոխարժեքն էլ հանդիսանում է օպտիմալ արժութային գոտիների առանցքային կատեգորիան: Եվրոպական փոքր երկրների համար արտաքին առևտրային գործարքներում արժութային կայունություն պահովելու համար զգալի միջազգային արժութային պահուստների ձևավորումը կլիներ մեծ բեռ, ուստի, ըստ նրա, բավարար չափի պահուստային ապահովվածություն ունեցող ֆիքսված արժութային համակարգը միայն կարող էր հանդիսանալ այն գործիքը, որը ավտոմատ կերպով կմեղմեր շոկերը (արժութային փոխարժեքների, արժութային պահուստների, վճարային հաշվեկշռի)՝ միաժամանակ չվնասելով ազգային արժույթների միջազգային իմիջը [12, 115]: Այլ կերպ ասած՝ փոքր երկրների համար, որոնք և՛ նախկինում, և՛

ներկայում կազմում են ԵՄ անդամ երկրների մեծ մասը, ընդհանուր արժույթի ֆիքսված փոխարժեքով գործող արժուրային համակարգը պետք է շահավետ լիներ այն պարզ պատճառով, որ այդ երկրների համար ազգային մակարդակում ֆիքսված փոխարժեքի ապահովումը կարժենար բավականին թանկ՝ պայմանավորված կայուն փոխարժեքի պահպանման համար արժուրային պահուստների ստեղծման բարձր ծախսերով: Հետևաբար՝ միասնական արժույթի օգտակարությունը Ռ. Մանդելի կողմից դիտվում էր, առաջին հերթին, որպես միջազգային առևտրի, կապիտալի շարժի, աշխատուժի միգրացիայի ապահովման միջոց: Ըստ էության, Ռ. Մանդելը այն գաղափարի կողմնակիցն էր, որ իդեալական արժուրային համակարգը համարվում է ոսկու միջազգային ստանդարտի համակարգ [2, 60]: Մինչդեռ չպետք է անտեսել այն հանգամանքը, որ ֆիքսված փոխարժեքի ռեժիմը թույլ չի տալիս կառավարությանը արագ արձագանքել ի հայտ եկող տնտեսական խնդիրներին և վարել ճկուն դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականություն, կիրառել արժուրային քաղաքականության անհրաժեշտ գործիքակազմ, որի արդյունքում առաջանում են ֆիքսված փոխարժեքի ներդրման հետևանքով կիրառվող սահմանափակումների հետ կապված ծախսեր:

Չ. Թալվասը գտնում է, որ եթե երկիրը արտադրության գործոնների, ֆինանսական գործարքների և ապրանքների առևտրի առումով որևէ աշխարհագրական տարածքի հետ ունի ինտեգրման խորը մակարդակ, հանդիսանում է փոքր բաց տնտեսություն և ունի բազմազանեցված արտադրական կառուցվածք, ապա տվյալ տարածքում ֆիքսված փոխարժեքը (կամ միասնական արժույթը) կարող է ավելի արդյունավետորեն ապահովել ներքին և արտաքին հավասարակշռություն, քան ճկուն փոխարժեքի դեպքում [13, 35]:

Ս. Դրոբիշևսկին և Դ. Պոլևոյը, ուսումնասիրելով Թ. Բայումիի, Լ. Ռիչիի, Ա. Ալեսինայի և Ռ. Բարրոյի կողմից օպտիմալ արժուրային գոտիների չափանիշների ամբողջական վերլուծության հիման վրա դրանց ֆորմալ մոդելները, ներկայացրել են վերջիններիս հիմնական արդյունքները, որոնք հետևյալն են.

1. արժուրային միություն ստեղծելիս կամ արդեն գոյություն ունեցող միությանն անդամակցելիս նկատվում է տնտեսական գործակալների բարեկեցության աճ՝ պայմանավորված մատչելի ապրանքների քանակի ընդլայնման և տրանսակցիոն ծախսերի վերացման հաշվին արտադրության և սպառման աճով,

2. անհրաժեշտ է հաշվի առնել երկրի չափը, քանի որ արժուրային

միությանը միանալուց հետո ստացվող օգուտները, տրանսակցիոն ծախսերի վերացմամբ պայմանավորված, ավելի մեծ են փոքր երկրների համար, որոնց տնտեսության հիմնական մասնաբաժինը կազմում է արտաքին առևտրի ոլորտը,

3. արժութային ինտեգրման օգուտները մեծանում են դիտարկվող տնտեսությունների վրա ազդող իրական շոկերի կոռելացիայի աճին և այդ շոկերի տատանողականության նվազմանը զուգընթաց, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ շոկերը համանման ազդեցություն են թողնում միության մասնակից երկրների տնտեսությունների վրա, որի դեպքում անհրաժեշտություն չի առաջանում արժութային փոխարժեքն օգտագործել որպես կայունացման մեխանիզմ,

4. որքան մեծ է դրամային շոկերի տատանողականությունը արտասահմանում կամ արժութային միության ներսում, այնքան ավելի քիչ դրդապատճառներ է ունենում երկիրը՝ մտնելու արժութային միություն: Միաժամանակ որքան մեծ է դրամային շոկերի տատանողականությունը երկրի ներսում, այնքան վերջինս ավելի շատ կշահի արժութային ինտեգրումից, քանի որ այդ դեպքում երկիրը գործընկեր երկրներից «կներմուծի» ավելի ցածր գնաճ [1, 47-48]:

Լողացող փոխարժեքի տեսության ընդդիմախոսները, ընդհանուր առմամբ, նշում են, որ բոլոր երկրները համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու առումով խիստ տարբերակված են, և հետևաբար այն երկրները, որոնք այդ գործընթացի մեջ ավելի մեծ չափով են ներգրավված, հակված են կիրառելու ֆիքսված արժութային փոխարժեք, քանի որ փոխարժեքի այդ ռեժիմն օպտիմալ է համաշխարհային առևտրի տեսանկյունից [2, 60]:

Ինչ վերաբերում է օպտիմալ արժութային գոտիների վերաբերյալ տեսությունների շրջանակներում ներկայացված չափանիշներին, ապա դրանցից ոչ բոլորն են դիմացել ժամանակի փորձությանը: Այսպես, մաքսային միության փուլում արտադրության և առևտրի կառուցվածքի միատարրության չափանիշը հակասում է օպտիմալ արժութային գոտու երկրների փոխադարձ առևտրի բարձր մակարդակի չափանիշին, իսկ աշխատուժի ներտարածաշրջանային ազատ տեղաշարժի չափանիշը ստեղծում է Ռ. Մանդելի կողմից առաջ քաշված օպտիմալ արժութային գոտու երկրներում աշխատուժի առաջարկի և աշխատավարձի մակարդակի նույն աստիճանի չափանիշի անհամապատասխանության ռիսկ աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի պայմաններում, քանի որ վերջիններիս բարձր միգրացիան աշխատանքի ազգային շուկաներում

առաջացնում է անհավասարակշռություն, այդ թվում՝ աշխատավարձերի մասով [4, 34]:

Չնայած այն հանգամանքին, որ օպտիմալ արժույթային գոտիների տեսությունը տարիների ընթացքում լայն տարածում է ստացել, որի դրույթների հիման վրա տրվել է տարբեր ինտեգրացիոն խմբավորումների, այդ թվում՝ եվրոյի գոտու ձևավորման հիմնավորումը, այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ արժույթային գոտու օպտիմալությունը անհասանելի է, քանի որ ցանկացած այդպիսի գործընթաց կապված է անխուսափելի այս կամ այն ծախսերի հետ, և ինտեգրման որոշ մասնակիցների շահը հաճախ սահմանափակում է դրա առավել թույլ այլ մասնակիցների հնարավորությունները՝ վերջիններիս կախվածության մեջ դնելով միության առաջատար երկրներից: Հետևաբար՝ արժույթային ինտեգրման տեսական հիմնավորումը պետք է կառուցվի ոչ թե արժույթային գոտու՝ օպտիմալ լինել-չլինելու հարցին պատասխանելու միջոցով, այլ վերլուծելով, թե որքանով են ինտեգրացիոն միությանը միանալու օգուտները գերազանցում համապատասխան ծախսերը [8, 54]: Ի. Իշիյաման, վերլուծելով օպտիմալ արժույթային գոտիների բոլոր չափանիշները, հանգել է այն եզրակացության, որ վերջիններիս օգուտները և վնասները ճշգրտորեն գնահատելու համար անհրաժեշտ է փոխարժեքի ֆիքսման դրական և բացասական կողմերը կշռել՝ ըստ դիտարկվող երկրին բնորոշ առանձնահատկությունների [10, 346]:

Ըստ Վ. Գ. Չապլիգինի՝ հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ օպտիմալ արժույթային գոտիների դասական տեսությունը հենց այն բացն է, որն անցումային տնտեսություն ունեցող երկրները պետք է լրացնեն, վերանայեն և որին, հնարավորության դեպքում, հարմարեցվեն: Նրա պնդմամբ, օպտիմալ արժույթային գոտիների տեսության դրույթները հետխորհրդային երկրներում կարելի է և պետք է օգտագործել մեծ զգուշավորությամբ, քանի որ այդ երկրներում միջպետական տնտեսական հարմարեցման շուկայական մեխանիզմները բավականին վատ են գործում [6, 132]: Անցումային տնտեսություն ունեցող երկրների միավորման գործընթացների դեպքում օպտիմալ արժույթային գոտիների տեսությունը հանդիսանում է ընդամենը արժույթային միության ստեղծման հնարավորությունների և խնդիրների վերլուծության տարր: Այդ երկրներում օպտիմալ արժույթային գոտիների տեսության կիրառման համար, բացի տնտեսական չափանիշներից (գների և աշխատավարձի ճկունություն, արտադրության գործոնների շարժունակություն, տնտեսության բացության աստիճան, տնտեսության բազմազանեցման բարձր

մակարդակ), անհրաժեշտ է հաշվի առնել նաև ոչ տնտեսական բնույթի նախադրյալները (լեզու, աշխարհագրական մերձություն, մշակույթ, կրոն և այլն) [5, 74]:

Հարկ է նշել, որ արժութային միության ձևավորումից հետո հնարավոր է միության աղքատ և հարուստ տարածաշրջանների միջև բարեկեցության մակարդակների տարբերությունների խորացումը: Ըստ Ջ. Ֆլեմինգի՝ միավորումից հետո ֆինանսական կապիտալի աճող հոսքերը կարող են ուղղվել առավելապես տնտեսական զարգացման բարձր տեմպեր ունեցող տարածաշրջաններ, քանի որ վերջիններիս ներդրումային գրավչությունը բավականին բարձր է: Այդ միտումները կարող են տեղի ունենալ մինչև արժութային միավորման պահը և շարունակվել ուժեղանալ դրանից հետո՝ պայմանավորված մասնակից երկրների միջև ֆինանսական կապիտալի տեղաշարժի սահմանափակումների վերացմամբ [9, 468]:

Բազմաթիվ տեսաբաններ և հետազոտողներ հանգել են այն եզրահանգման, որ օպտիմալ արժութային գոտիների տեսությունը կորցել է իր արդիականությունը, քանի որ չափանիշները, որոնք ընկած են այդ տեսության հիմքում, այլևս կիրառելի չեն և չեն համապատասխանում 21-րդ դարի համաշխարհային տնտեսության զլոբալացման ժամանակակից պայմաններին և մարտահրավերներին: Դեռևս 1990-ական թթ. սկզբներին որպես տվյալ տեսության այլընտրանք և նոր ուղղություն՝ Տ. Վալովայայի կողմից մշակվել է տարածաշրջանային տնտեսական և արժութային միության տեսությունը և ներկայացվել տնտեսական և արժութային ինտեգրման գործընթացի օրինաչափությունների վերաբերյալ հայեցակարգ, որի պահպանումը հանդիսանում է տնտեսական և արժութային միության կայունության, ինչպես նաև միության անդամ պետությունների առավելությունների ավելացման և ծախսերի նվազեցման անփոխարինելի պայմանը: Նրա կողմից միաժամանակ հիմնավորվել է տնտեսական կոնվերգենցիաների, մակրոտնտեսական և մակրոֆինանսական չափանիշների մոտարկման, դրամական, վարկային, ֆինանսական քաղաքականության կոորդինացման ու կոնվերգենցիայի առաջնահերթությունը որպես տնտեսական և արժութային միության ստեղծման և դրա կայունության ապահովման նախադրյալ: Տ. Վալովայան եվրոպական տնտեսական և արժութային միության փորձի ուսումնասիրության արդյունքում հանգել է նաև եվրոպական արժութային ինտեգրման և արժութային բազմակենտրոնության միտումների միջև կապի առկայության մասին եզրակացության [4, 35]:

Լ. Կրասավինան գտնում է, որ տնտեսական միության ստեղծման հիման վրա (այլ ոչ թե դրա շրջանակներում) տնտեսական և արժութային միության փուլային ձևավորման օրինաչափությունն անվիճելի է: Ըստ նրա՝ տվյալ փուլայնության չպահպանումը եվրոպական ինտեգրման զարգացումը հետաձգել է մոտ 20 տարի: Օրինակ, ըստ նրա՝ Վերնենի պլանը անհաջողության մատնվեց, քանի որ այն հիմնված էր եվրոպական տնտեսական և արժութային միության ոչ թե փուլային, այլ զուգահեռ ձևավորման վրա: Ըստ Վալովայայի, ԵՄ-ում խախտված էր տնտեսական ինտեգրման փուլայնության օրինաչափությունը, քանի որ եվրոպական ինտեգրացիոն միության զարգացումը, մաքսային միությունից անցումը միանգամից տնտեսական միության կրճատել է միասնական տնտեսական տարածքի ձևավորման փուլը՝ ի տարբերություն եվրասիական ինտեգրման: Այս առումով Լ. Կրասավինան գտնում է, որ ԵԱՏՄ հիմքի վրա ապագա եվրասիական տնտեսական և արժութային միության ստեղծման նպատակով փուլայնության պահպանման համար անհրաժեշտ է արդյունավետ գործող ընդհանուր շուկա, ինչը պահանջում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ շարժի ճանապարհին առկա մնացած արգելքների վերացում: Եվրոպական և եվրասիական ինտեգրման փորձը վկայում է դրանց զարգացման անհամաչափ օրինաչափությունների մասին՝ պայմանավորված մասնակից երկրների զարգացման, մակրոտնտեսական և ֆինանսական չափանիշներին վերջիններիս համապատասխանեցման և տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների կորոդինացման տարբեր մակարդակներով [4, 36]:

Մինչ այժմ օպտիմալ արժութային գոտիների տեսությանն առնչվող հետազոտությունները հիմնականում վերաբերել են նախնական միջպետական կոնվերգենցիալությանը և բավականին քիչ չափով՝ այն անհամապատասխանությունների համահարթեցման հիմնախնդիրներին, որոնք պահպանվել են արժութային միության մեկնարկի պահին կամ կարող են ի հայտ գալ դրա գործունեության ընթացքում: Բացի այդ, արժութային միությունը կարող է ստեղծվել, հաջողությամբ գործել, սակայն հնարավոր է, որ ինչ-որ պահի միության անդամներից որևէ մեկը հետագայում որոշում կայացնի այդ միությունից դուրս գալու համար: Այդ դեպքում որո՞նք պետք է լինեն նման իրավիճակի կանխմանն ուղղված գործնական միջոցառումները, և պետությունն ինչպիսի՞ մեթոդաբանական զարգացումների վրա պետք է հիմնվի՝ արժութային միություն մտնելու կամ դրանից դուրս գալու «կողմ» և «դեմ» փաստարկներն օբյեկտիվորեն

գնահատելու համար: Օրինակ, մինչ Եվրոպական արժույթային միությանը պետությունների անդամակցությունը՝ տեղի ունեցող բազմակողմանի քննարկումների արդյունքում մշակվեց Եվրոպական արժույթային համակարգից անդամ պետությունների դուրս գալու պլան: Ռ. Վաուբելի աշխատությունում առաջարկվում էր իրականացնել միասնական արժույթին անցում կատարելու տարբեր ուղիների համեմատական վերլուծություն և Եվրոպայում ձևավորել միասնական արժույթային տարածք: Ելնելով օպտիմալ արժույթային գոտիների վերաբերյալ արդեն իսկ գոյություն ունեցող տեսություններից՝ նա փորձել է արժույթային միության ստեղծումը հիմնավորել ոչ թե տնտեսական կոնվերգենցիայի՝ որպես որոշակի հիմնարար սկզբունքի, այլ միասնական արժույթի ներդրման միջոցով տնտեսական ոլորտում առկա անհամապատասխանությունների համահարթեցման անխուսափելիության տեսանկյունից: Այդ իսկ պատճառով Ռ. Վաուբելը գտնում է, որ արժույթային միավորման գործընթացները չեն կարող դիտարկվել բացառապես Ռ. Մանդելի տեսության պրիզմայով, այլ դրանք պետք է ենթարկվեն համապարփակ ուսումնասիրության: Եվ ինչպես ներկայացվում է, օպտիմալ արժույթային գոտիների տեսության չափանիշների ապահովումը պետության կողմից արժույթային միությանը միանալու կամ չմիանալու որոշման ընդունման վրա անվերապահ ազդեցություն ունենալու որոշիչ գործոն չէ [6, 132-133]:

Այնուամենայնիվ, օպտիմալ արժույթային գոտիների տեսությունները հանդիսանում են միջպետական տնտեսական կոնվերգենցիաների առանձին պարամետրերի հավաքածու, որոնց պահպանումը պայմաններ է ստեղծում արժույթային միությանն անցում կատարելու համար: Մինչդեռ, ըստ Վ. Չապլիզինի, միասնական արժույթային գոտիների ձևավորումը նկարագրող դինամիկ մոդելների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ արժույթային միությունների ստեղծման ժամանակ տնտեսական կոնվերգենցիաները ոչ միշտ են հաշվի առնվել և առնվում [7, 63]: Այսպես, վերլուծություններից մեկի համաձայն՝ ԵՄ երկրները եվրոյի ներդրման պահին չեն ապահովել օպտիմալ արժույթային գոտու ձևավորումը: Ճիշտ է, ամբողջությամբ ապահովվել է միմյանց նկատմամբ տնտեսությունների բացմանը վերաբերող չափանիշը, սակայն մյուսները չեն կատարվել կամ կատարվել են մասամբ: Ըստ այդմ, արտադրության գործոնների ազատ շարժի չափանիշն ապահովվել է մասնակի, քանի որ չնայած այն հանգամանքին, որ կապիտալի շարժի սահմանափակումները վերացվել էին ամբողջությամբ, աշխատուժի շարժի ազատականացման մասով առկա էին խնդիրներ: Աշխատավարձի և գների ճկունության

չափանիշը ևս հիմնականում չի ապահովվել: Տնտեսության կառուցվածքի բազմազանեցման բարձր մակարդակ ապահովելու չափանիշը, բացառությամբ որոշ երկրների (օրինակ՝ Ղուբուքի, Ղուբուքի, Լյուքսեմբուրգ), իրականացվել է ամբողջությամբ: Մյուս չափանիշը, որը վերաբերում է արժույթային միության մասնակից երկրների տնտեսությունների՝ ներքին և արտաքին շուկերին միանման արձագանքելուն, դեռևս ենթակա է խորը ուսումնասիրության [3, 61]:

Եզրակացություն

Այսպիսով, արժույթային գոտու ձևավորման հիմնական արդյունքը պետք է լինի ինտեգրվող երկրների ազգային տնտեսությունների կայունությունն ու բարձր արդյունավետության ապահովումը՝ հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող ընդհանուր տնտեսական զարգացումները: Անշուշտ, արժույթային գոտու ստեղծման նպատակահարմարությունը պետք է հիմնված լինի դրա օպտիմալության չափանիշների ապահովման վրա: Մակայն վերջիններիս մի մասի՝ էմպիրիկ հետազոտությունների արդյունքներով բացահայտված հակասությունները և ամբողջովին հիմնավորված չլինելը հիմք է տալիս եզրակացնելու, որ օպտիմալ արժույթային գոտիների ձևավորման հիմքում պետք է ընկած լինի մասնակից երկրների համար այդ գործընթացից օգուտների և վնասների համադրումը: Ի վերջո, պետք է նկատի ունենալ, որ արժույթային գոտիների օպտիմալության չափանիշները մշակվել են այն ժամանակահատվածում (1960-ական թթ.), երբ ամբողջական գործող ինտեգրացիոն խմբավորում դեռևս գոյություն չուներ, ուստի այդ չափանիշները տևական ժամանակ կրում էին առավելապես տեսական, քան պրակտիկ բնույթ:

Գրականություն

1. Дробышевский С.М., Полевой Д.И. Проблемы создания единой валютной зоны в странах СНГ. М.: ИЭПП, 2004, 110 с.
2. Дубянский А.Н. Теория оптимальных валютных зон и единая европейская валюта // Вестник Санкт-Петербургского университета. 2014, N 2, с. 57-69.
3. Кондратов Д.И. О некоторых актуальных проблемах европейской экономики // Деньги и кредит. 2012. N 8, с. 61-66.
4. Красавина Л.Н. Концепция регионального экономического и валютного союза: отличие от теории оптимальных валютных зон // Деньги и кредит. 2015, N 7, с. 33-40.
5. Сибирская А. Методологические аспекты валютной интеграции // Беларуская думка. 2014, N 10, с. 71-75.
6. Чаплыгин В.Г. Генезис валютно-финансовой интеграции // Вестник Оренбургского государственного университета. 2003, N 6, с. 129-133
7. Чаплыгин В.Г. Общетеоретические аспекты валютно-финансовой интеграции // Экономическая наука современной России. 2004, N 1, с. 58-66
8. Янишевская Я.А. Теоретические основы единой валюты и причины возникновения валютных союзов в современном мире // Право и управление. 2021, N 2, с. 52-59.
9. Fleming J.M. On Exchange Rate Unification // The Economic Journal. 1971, Vol. 81, no. 323, pp. 467-488
10. Ishiyama I. The Theory of Optimum Currency Areas: A Survey // IMF Staff Papers, 1975, no. 22, pp. 344-383
11. Mundell R.A. A Theory of Optimum Currency Areas // American Economic Review. 1961, Vol. 51, Issue 4, pp. 657-665
12. Mundell R.A. Uncommon Arguments for Common Currencies, // The Economics of Common Currencies, London, Allen and Unwin, 1973, pp. 114-132
13. Tavlas G.S. The Theory of Optimum Currency Areas Revisited // IMF, Finance & Development/June 1993, Vol. 0030: Issue 002, pp. 32-35

Концептуальные подходы к теориям оптимальных валютных зон

Авагян Мисак

Резюме

Ключевые слова: оптимальная валютная зона, критерий оптимальности, экономическая конвергенция, экономический и валютный союз, валютный курс, региональная валютная система, внешний и внутренний баланс

Принципы, выдвинутые теоретиками валютных зон, получили свое практическое применение при формировании Европейского союза и европейской валютной системы, что привело к введению единой региональной валюты – евро. Позднее были представлены новые исследования по теории оптимальных валютных зон, важность которых была обусловлена усиливающейся глобализацией мирохозяйственных связей. Последнее приводит к увеличению объема движения капитала в мировой экономике, в результате чего режим фиксированного валютного курса считается менее надежным инструментом, а переход к плавающему валютному курсу, в свою очередь, показывает, что эта система также не в состоянии обеспечить жизнеспособные условия для внешнеэкономической деятельности стран из-за крайней волатильности обменного курса. В рамках теории оптимальных валютных зон рядом исследователей в разное время были представлены разные критерии обеспечения оптимальности (гибкость цен и заработной платы, мобильность факторов производства, интеграция финансовых рынков, экономическая открытость, диверсификация производства и потребления, фискальная интеграция, сходство темпов инфляции, политическая интеграция), которые как дополняют, так и противоречат друг другу. Несмотря на это, экономисты сходятся во мнении, что существуют условия, при которых для некоторых стран предпочтительнее использовать фиксированный обменный курс с точки зрения обеспечения внешнего и внутреннего баланса. Основным аргументом, подтверждающим ее, является сравнительный анализ преимуществ и недостатков плавающего и фиксированного валютных курсов при воздействии различных шоков на экономику стран.

В целях изучения указанных проблем в работе представлены наблюдения за различными концептуальными подходами относительно теоретических основ и критериев валютной интеграции как одной из основных тенденций развития мировой валютной системы в условиях глобализации,

и на их основе были подняты некоторые проблемы теоретического обоснования валютной интеграции. Также были указаны приоритеты формирования оптимальной валютной зоны и определения ее критериев.

Подводя итоги, было отмечено, что, несмотря на то, что целесообразность создания валютной зоны должна основываться на обеспечении ее критериев оптимальности, выявленные по результатам эмпирического исследования, противоречия и неполная обоснованность некоторых из них, формируют оптимальные валютные зоны на сочетании выгод и издержек процесса для стран-участниц.

Conceptual Approaches to Theories of Optimum Currency Areas

Avagyan Misak

Summary

Key words: *optimum currency area, optimality criterion, economic convergence, economic and monetary union, exchange rate, regional monetary system, external and internal balance*

The principles put forward by the theorists of currency areas have received their practical application in the formation of the European Union and the European monetary system, which led to the introduction of a single regional currency – the euro. Later, new studies were presented on the theory of optimum currency areas, the importance of which was due to the increasing globalization of world economic relations. The latter leads to an increase in the volume of capital movement in the world economy, as a result of which the fixed exchange rate regime is considered a less reliable instrument, and the transition to a floating exchange rate, in turn, shows that this system is also unable to provide a viable conditions for the foreign economic activity of countries due to extreme exchange rate volatility. Within the framework of the theory of optimum currency areas, a number of researchers at various times presented different criteria for ensuring optimality (flexibility of prices and wages, mobility of production factors, integration of financial markets, economic openness, diversification of production and consumption, fiscal integration, similarity of inflation rates, political integration) which both complement and contradict each other. Despite this, economists are of the same opinion that there are conditions under which it is preferable for some countries to use a fixed exchange rate from the point of view of ensuring external and internal balance. The main argument confirming it is a

comparative analysis of the advantages and disadvantages of floating and fixed exchange rates under the impact of various shocks on the economies of countries.

In order to study these problems, the paper presents observations of various conceptual approaches regarding the theoretical foundations and criteria of monetary integration as one of the main trends in the development of the world monetary system in the context of globalization, and on their basis some problems of the theoretical justification of monetary integration were raised. The priorities for the formation of an optimum currency area and the definition of determining its criteria were also indicated.

Summing up, it was noted that, despite the fact that the expediency of creating a currency area should be based on ensuring its optimality criteria, the contradictions and incomplete validity of some of them, identified by the results of an empirical study, give grounds for the conclusion that the formation of optimum currency areas should be based on the combination of benefits and costs of the process for participating countries.

Ներկայացվել է 27.09.2022 թ.

Գրախոսվել է 19.10.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.